ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 33-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ հայրենակիցներ,
Այսօր Հայոց բանակի կազմավորման 33-րդ տարեդարձն է:

Հայոց բանակը ձևավորվել է մեր երկրի անկախության ու հայի ազատության երաշխավորը լինելու համար և այսօր էլ շարունակում է իր արժանապատիվ առաքելությունը՝ կանգնած լինելով մեր երկրի սահմանների պաշտպանության առաջնագծում:

Այս օրը խորին երախտագիտությամբ խոնարհվում ենք բոլոր նրանց առաջ, ովքեր իրենց կյանքը նվիրաբերել են հայրենիքի պաշտպանության սուրբ գործին, ինչպես նաև շնորհավորում ենք մեր զինվորներին, սպաներին ու վետերաններին՝ մաղթելով անսպառ ուժ, տոկունություն և բարի ծառայություն:

Թող Հայոց բանակը միշտ հզոր լինի, անառիկ ու իր նվիրական առաքելության բարձրության վրա:

Փա՛ռք Հայոց բանակին,
Փա՛ռք Հայ զինվորին: